

Առանձին ազրերու եւ իրենց մասնաւոր կենցաղը վարելու հրէական այս փառիւքն է հակահրէականութեան գլխաւոր պատճառը: Երեւակայեցէք փոքրիկ քաղաքի մը մէջ հաստատուած քանի մը հրէայ ընտանիք, որ կը խորշին քրիստոնեաներու հետ յարաբերութիւն ունենալէ, անոնց հետ ճաշելէ եւայլն եւ փոխադրուեցէք միջին դարու խաւարեալ եւ մոլեռանդ ժամանակները: Հրէայի այս վարմունքը չէր բխեր անշուշտ քրիստոնեային հանդէպ իր ունեցած ատելութենէն, այլ նա պարզապէս իր թօրան կը պաշտպանէր այդպիսով: Բայց դժուար կարելի է մեղադրել նաեւ ռամիկ քրիստոնեան, որ հաշտ աչքով չէր նայեր հրէայի այդ տարամերժ ձգտումներուն*):

Ինչե՞ր չեն պատմած մոլեռանդ քահանաներն իրենց հայրերուն՝ հրէաներուն նկատմամբ, որ խաջն հանած են աստուածորդի Յիսուսը. եթէ ան չի հաներ իր գլխարկը, պատճառն այն է, որ եղջիւրներ ունի. եթէ լաջն շարվար կը հագնի, պատճառն այն է որ սատանայի նման պոչ ունի. եթէ գլուխը կախ կը պտտի, պատճառն այն է որ բերանը կը հօտի: Հրէական տասներկու ցեղերէն իւրաքանչիւրն իր մասնաւոր ախտն ու թերութիւնը ունէր...

Կէթթօն նախապէս կամաւոր էր, ինչպէս ըսինք, բայց եկաւ ժամանակ մը, երբ այդ կամաւոր ընտկարանը պարտաւորիչ եւ բռնի

*) 1916 թուականին Ռուսմանիոյ մայրաքաղաքը գերմանացիներու զրուսման սպառնալիքին տակ եղած ժամանակ՝ ստիպուեցանք Մոլոտալիոյ Յաշ քաղաքն ապաւինիլ եւ վեց ամիս ապրեցանք հրէայի մը տան մէկ սենեակին մէջ: Առանց պիտանալու, թէ մոլեռանդներու հետ է յարաբերութիւննիս, երկրորդ օրը տանախինով բացակայութեան ժամանակ, անոր մէկ կաթնախոյլը կերակուր պատրաստեցինք մեղի համար: Երբ տանախիկներ վերահասու եղաւ այդ բանին, ինչդրեց որ այլեւս իր խոհանոցը չերթանք, որովհետեւ ստիպուած է ամբողջ ամանները լուալ եւ խոհանոցը ծայրէ ծայր մաքրել, քանի որ մեր կերած միսը քաշեր չէ, այսինքն՝ խախամին ձեռքով կտրուած չէ:

արգելարանի մը վերածուեցաւ եւ հրէաներուն արգելուեցաւ ուրիշ թաղերու մէջ բնակելու:

Վատիկանի կամքն էր այս եւ ատով Հռովմայ Պապերը կ'ուզէին լաւի յաղթանակը նըւիրազործել սինակօկին վրայ եւ ըստ կարելու յառ հրէաներ վարձնել քրիստոնեայ կրօնին:

Ստորնացուցիչ ամէն տեսակ միջոցներու դիմեցին Պապերը հրէաներու կեանքն անտանելի դարձնելու համար եւ մինչեւ իսկ ստիպեցին դանոնք Կէթթօն դուրս անցուցած ժամանակին անպատճառ գլխարկնուն կամ ուսերուն վրայ մասնաւոր նշան մը ունենալ քրիստոնեաներէն դիւրաւ զանազանուելու համար: Միևնոյն բանն ըրած են Սպանիոյ Արաբ խալիֆաները քրիստոնեաներուն եւ աւելի վերջերն Արեւելքի սուլթանները իրենց հպատակ բայաներուն նկատմամբ:

Քրիստոնեաներու վրայ իշխանութիւն ունենալու հակամէտ սեւէ պաշտօն արգիլուած էր հրէաներուն: Ամէն անգամ որ սեւէ հրէայ բռնի կամ վաճառական իր ճարպիկութեան կամ կարողութեան չնորհիւ բարձր դիրքի մը կը տիրանար, Պապերը պարսաւանքի մասնաւոր նամակներ կը գրէին անոնց պաշտպան իշխաններուն կամ թագաւորներուն: Միակ գործը, որ արտօնուած էր անոնց, ոսկիի առուտուն էր, որուն նուիրուած էին անոնք Հրէաստանէն գաղթելէն ի վեր:

Ահաւաստիկ ճարպիկ եւ գործունեայ մարդիկ, որ կը վտարուին երկրէ երկիր եւ ստիպուած են ապրուստ հայթայթել: Եկեղեցին կ'արգիլէր քրիստոնեային դրամ փոխ տալ տոկոսով: Հրէան ազատ էր այդ պատուէրին հընազանդելու պարտականութենէն, եւ միւս կողմէն եկեղեցին ալ պէտք ունէր այդ գործին:

Ոսկիին յարգը հիմա ալ շատ մեծ է, բայց այժմ ուրիշ հարստութիւններ ալ կան, ինչպէս ապրանքներ, գործարաններ, կալուածներ, վարկ են: Միջին դարերու միակ շուշափելի հարստութիւնը ոսկին էր, եւ ատոր համար է որ փիլիսոփաներն իրենց ամբողջ կարողութիւնը կը գործածէին ոսկեփոխութեան արուեստը (Alchimie) գտնելու համար:

Պապերն եւ իշխանները գոհ էին, որ հրէան զբաղէր այդ անիծեալ, բայց կարեւոր գոր-